Հաստատում եմ
Խորհրդին - [illegible]

Ընդունված է
Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական
ուսումնարանի ուսանողական
խորհրդի 2013 թ. 20.09 ին
կայացրած նիստում

ՈՒԽ նախագահ Լ. Մարգարյան
ՈՒԽ քարտուղար Գ. Վարդանյան

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհուրդը (այնուհետ ՈՒԽ) ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա շահերը ներկայացնող ընտրովի մարմին է:
Ուսանողական խորհուրդն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:
Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ՈՒԽ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Գյումրի, Անի թաղամաս,11փ., 5/2:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ՈՒԽ-ի նպատակն է

1. Պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները:
2. Ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնարանի կառավարմանը:
3. Ուսումնարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր:
4. Մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
5. Իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին:
6. Համագործակցել այլ ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների հետ և նպաստել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը, աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը:
7. Մասնակցել ուսումնարանի ներքին կարգապահության պահպանմանը:
8. Զբաղվել ուսանողներին հուզող այն խնդիրներով, որոնք նախատեսված չեն սույն կանոնադրությամբ:

9. Ուսանողական խորհուրդը գումարում է նիստեր:
10. Ուսանողական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում 4 անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ:
11. Խորհրդի նիստերը բաց են, հաստատության բոլոր մանկավարժները և ուսանողները կարող են ներկա գտնվել նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքում:
12. Քարտուղարը պատասխանատու է նիստերի արձանագրությունները լրացնելու և օրինականությամբ կազմելու համար:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1.Ուսանողական խորհրդի նախագահը, նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարի թեկնածուները ընտրվում են այն անդամներից, որ ներկայացնում են ուսումնարանում առկա կուրսերի ուսանողները:
2.ՈՒԽ նախագահի ընտրությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ: Նախագահի տեղակալի, պատասխանատու քարտուղարի ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ:
3. ՈՒԽ նախագահը հանդես է գալիս ուսանողական խորհրդի գործունեության մասին հաշվետվությամբ:
4. ՈՒԽ նախագահի տեղակալը նախագահի բացակայության ժամանակ վերջինիս լիազորմամբ ողջ ծավալով կատարում է նախագահի պարտականությունները:
5. Պատասխանատու քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները: